

## ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Ծնած է Իսթանպուլ, Ռումէլիիսար՝ 1953-ին: Մանկութիւնը անցած է Թաֆսիմ թաղի Ֆէրիտիյէ փողոցը, որու հայկական դիմագիծը խորապէս ազդած է իր վրայ: Յանախած է թաղին էսսանն եւ Միսիթարեան ու ապա Կեդրոնական վարժարանները: Հիմնադիրներէն եղած է Պոյանըզիւղի Սայաթ Նովա դպրաց դաս երգչախումբին: Պատմութիւնները լոյս տեսած են «Նոր Սան» եւ «Հօպինա» հանդէսներու, «Մարմարա» եւ «Ակօս» թերթերու մէջ:

Էսդուգեանի նախապէս զանազան թերթերու մէջ լոյս տեսած բազմաթիւ պատմութիւններէն ընտրանիի մը թրքերէն թարգմանութիւնը «Հայ հիփալէլեր» խորագրով հրատարակուեցաւ Իսթանպուլի մէջ 2011-ին:

Էսդուգեան ամուսնացած է, ունի երկու որդիներ եւ կ'աշխատակցի «Ակօս» շաբաթաթերթի հայերէն բաժնին:



Շնորհակալութիւն  
Սայաթ Նովա Երգչախումբին՝  
այս գրքին իրականացման համար

# ՊԱՆԴՈՒԽՏ ԵՐԳԵՐ

**Արաս Հրատարակչություն**  
**A r a s Y a y ı n c ı l ı k**

İstiklal Caddesi, Hıdivyal Palas 231/Z  
34070 Tünel, Beyoğlu-İstanbul

Tel: (90) 212.252 65 18 - 243 06 02

Fax: (90) 212.252 65 19

[www.arasyayincilik.com](http://www.arasyayincilik.com)

[info@arasyayincilik.com](mailto:info@arasyayincilik.com)

Sertifika No: 10728

---

ARAS - ԱՐԱՍ 136

---

**ՊԱՆԴՈՒԽՏ ԵՐԳԵՐ**

(պարամուծք)

**ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ**

Կողքի Պատրաստություն

Արէա Կըճըր

Կողքի Լուսանկար

Արա Կիւլէր

Տպագրություն

Սէնա Օֆսէթ

Փետրուար 2013 Ստանպուլ

ISBN 978-605-5753-36-8

# ՊԱՆԴՈՒԽՏ ԵՐԳԵՐ

ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ





## ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳ

Ձէին գիտեր թէ այս պահը ճիշդ ա՞յն պահն էր, որ կ'ապրէին հիմա, թէ ոչ երեսուն-քառասուն տարիներ առաջուան պահի մը կրկնութիւնն էր:

Երկու եղբայր՝ Ժիրայրն ու Արմանը իրենց մօր կողքին նստած են եկեղեցիին խորհրդարանը: Կը սպասեն որ գանգակները ղօղանջեն եւ եկեղեցի մտնեն: Քարտուղարը իր սեղանին ետին, անձայն եւ առանց իր նայուածքով դէմիններուն անհանգստութիւն պատճառելու, թափանցել կ'ուզէ մօր եւ զաւակներուն ներաշխարհը: Տղոց դէմքը արդէն կը մատնէ իրենց յոգնութիւնն ու քնատուութիւնը, իսկ մօր երեսին վրայ տարտամօրէն կը նշմարուի տղաքը քովը ըլլալուն առթած ուրախութիւնը:

Արմանն էր երէցը եւ հիմա սա վերջին օրերը կը մտաբերէր: Կիրակի առաւօտուան կանուխ ժամուն հնչած էր հեռախօսը: Մօրը հեծկլտացող ձայնն էր:

Գուշակած էր չար պատահարը՝ դեռ մայրը չըսած: Հագիւ «Ե՞րբ», կրցաւ հարցնել: Մօրը ձայնը անհասկնալի կը թուէր, միայն կը լսէր՝ «Ի՞նչ պիտի ընենք, ի՞նչ ըսեմ կազմակերպիչին, կրնա՞ք գալ»ի նման հարցումներ: «Մամա, սա պահուն բան մը չեմ կրնար ըսել, ժամը առաւօտուան երեքն է հոս, ես աւելի վերջ քեզ կը փնտռեմ»:

Ինք դրած էր վերջակէտը խօսակցութեան, ինք տեղը դրաւ ընկալուէր: Մատները անգիտակցաբար գտան ծխախոտի տուփը, ծխիկ մը առաւ եւ վառեց: Կինը Ձապէլ ալ արթնցած էր: «Քանի անգամ ըսի, գոնէ այս սենեակին մէջ մի՛ ծխեր» պիտի սաստէր, լռեց. զգաց ամուսինին յուզումը եւ հարցական ակնարկով նայեցաւ Արմանին: «Հայրս, հայրս մեռեր է», ըսաւ Արման եւ իջաւ անկողնէն: «Գօֆի կուզե՞ս», հարցուց կնոջը: Ձապէլ պիտի չուզէր սուրճ խմել այդ ժամուն, բայց ընկերակցիլ ուզեց ամուսնին. «Ես կ'եփեմ», ըսաւ: Առաւօտուն երբ տղաքը արթնցնելու համար բազկաթոռէն ելաւ, անդրադարձաւ որ մոխրամանը լեցուեր էր եւ սրճամանն ալ պարպուեր: Նախ ատոնք խոհանոց տարաւ, յետոյ պատուհանը բացաւ, որպէսզի քիչ մը օդը փոխուի, ապա տղոց սենեակը ուղղուեցաւ:

\* \* \*

Չէին գիտեր, թէ այս պահը ճիշդ ա՞յն պահն էր, որ կ'ապրէին հիմա, թէ ոչ երեսուն-քառասուն տարիներ առաջուան պահի մը կրկնութիւնն էր: Երկու եղբայր, ժիրայրն ու Արմանը մօր կողքին կայնած են դասի ետին եւ իրենց հօր յուզարկաւորութեան կը հետեւին: Սգակիրները յաճախ քովնտի ակնարկներով կը սուզեն, թափանձել կ'ուզեն մօր եւ զաւակներուն ներաշխարհը:



Տղոց դէմքը հիմա կը պարզէ վերջին պարտականութիւնը կատարած ըլլալու գոհունակութիւնը: Իսկ մօր երեսին վրայ կը նշմարուի քառասուններեք տարուան միասնութեան – եւ ուրախ, եւ խաղաղ, եւ յարգարժան միասնութեան մը– վերջին պահը ապրելու տիրութիւնը:

Ժիրայրն էր կրտսերը եւ հիմա ան իր եղբօր նման սա վերջին չորս օրերը կը մտաբերէր: Արմանը հազիւ իրիկուան չորսին կրցած էր հաղորդել հօրը մահուան գոյժը:

Ժիրայրն ու կինը միասնաբար ստանձնած էին բազմամարդ գործարանի մը նախաճաշի եւ ընթրիքի պատրաստութիւնը եւ սպասարկութիւնը: Դեռ առաւօտուան առաջին լոյսէն առաջ կը սկսէր պատրաստութիւնը նախաճաշին եւ անմիջապէս վերջն ալ՝ ցերեկուան ճաշին: Երբ իր աշխատաւորները կը լծուէին ամանները լուսլու, ինք պէտք էր շուկայ երթար՝ յաջորդ օրուան ուտեստեղէնները գնելու համար:

Հազիւ տուն հասած էր, երբ աղջիկը Նիքոլ իմացուց որ հօրեղբայրը փնտռած է եւ անպայման հեռաձայնին կը սպասէ: Պահ մը քարացած մնաց ընկալուչը ձեռքին: Հազարումէկ պատկերներ շարժանկարի ժապաւէնի նման տողանցեցին մտքին մէջ: «Ի՞նչ պիտի ընենք», հարցուց ինքնամփոփուած: «Մաման մինակ չենք կրնար թողուլ, պէտք է յուղարկաւորութեան հոն ըլլանք», պատասխանեց Արման: Համաձայնեցան: Ինք նախ հեռաձայնեց օդակայան, տոմսակները ապահովեց, եւ յետոյ մայրը փնտռեց:

Տիկին Վեհանոյշ առաջին զանգին իսկ վերցուց ընկալուչը: Ժամը առաւօտուան երեքն էր: Արդէն քիչ քնացող էր, իսկ հիմա այս տան մէջ ճիշդ քառասուններեք տարիները բաժնած ամուսինը եթէ մէկ օրէն միւսը կորի, ի՞նչպէս կրնաս քնանալ. յետոյ գիտէր որ տղոցմէ

լուր պիտի գայ, դեռ ի՞նչ քնննալ: «Ուրեմն Չորեքշաբթի՞ հոս կ'ըլլաք», հարցուց: «Լաւ ուրեմն, ես քիչ վերջ կազմակերպիչին լուր կու տամ որ Հինգշաբթի պիտի ըլլայ յուզարկաւորութիւնը»:

Ինք տասնըվեց, իսկ Արմանը տասնըութ տարիներ առաջ բաժնուած էին հօրենական տունէն: Ծնողներէն հեռու ամուսնացած էին եւ զաւակներ ունեցած: Առաջ յաճախ կը թղթակցէին, իսկ վերջին տարիներուն ընդհանրապէս հեռաձայնով կը հաղորդակցէին: Ծնունդի, Զատիկի տօներուն, յատկապէս ալ մայրերու օրին կը փնտռէին ծնողքը: «Երկուքս ալ շատ աղէկ ենք», կ'ըսէր մայրը: Հազիւ հիմա կը զգար որ շատ անգամ սուտ էին այդ խօսքերը: Մօր սիրտը աւելի փափկանկատ կ'ըլլայ. «Եթէ հիւանդ ենք ըսենք, ի՞նչ կրնան ընել տղաքը, ի դուր սրտերնին պիտի նեղուի»: Հիմա ա՛լ աւելի կը ձայնակցէր Արմանին: «Իսկապէս մայրիկս պէտք է հետերնիս տանինք, ի՞նչ գործ ունի հոս՝ բոլորովին առանձին»:

\* \* \*

Ձէր գիտեր թէ այս պահը ճիշդ ա՛յն պահն է որ կ'ապրի հիմա, թէ ոչ երեսուն-քառասուն տարիներ առաջուան պահի մը կրկնութիւնն էր: Տիկին Վեհանոյչ տասնըութ տարիներ վերջ առաջին անգամ համախմբուած էր զաւակներով, աւա՛ղ որ Տիրանի մահուան առթիւ էր այս մէկտեղումը:

Արմանը մէկ թեւին, Ժիրայրը միւսին, հասան տուն: Դրացին դիմաւորեց գիրենք, ցաւակցութիւն յայտնեց եւ մեղմ ձայնով՝ «ներողութիւն դուք գործ ընելու տրամադրութիւն չէք ունենար խորհեցայ, տերեւի տօլմա փաթթեցի, հրամանեցէք խնդրեմ», ըսաւ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳ .....	7
ՊԱՆԴՈՒԽՏԻ, ԱՆՏՈՒՆԻԻ ԵՒ ԱՅԼՈՅ ՄԱՍԻՆ .....	16
ուր ԿԱՄ հոն կաց .....	33
ՄՈՒԹ ԳԻՇԵՐԸ ՅՂԻ .....	44
ՄՆԱՅԱԿԱՆ ՎԵՐՅԻՇՈՒՄՆԵՐ .....	54
«...ԵԹԷ ՈՉ ՃԱՄԲՈՐԴ ՄԻ ԱՐԻ...» .....	63
ԹՈՂ ԵՐԱԽԱՆ ՉՄՍԻ .....	74
11+1 .....	83
ՄԵՆԱԲՈՂՈՔ՝ ԶՈՒԹԱԿՈՎ .....	90
ԵՐԱՆԻ ԳՈՒԼՊԱՍ ՓՈԽԱԾ ԸԼԼԱՅԻ... .....	102
ԿՕԿՕՆ .....	106
ՔԱՍՐԸ ՇԻՐԻՆ 1916 .....	110
ՍԵՄԱՎԷՐՆ ԱԼ ԳՆԱՅ .....	116
«ԿԱՅ ԷՆԹԷՐՆԱՅԻՈՆԱԼ ՓԱՐԴԻԶԱՆ ԶՈԿԱՏԸ» .....	125

Bantukhd Yerker | Bahn-tught Yer-ker  
Gurbet Şarkıları | Homesick Songs

Yazar | Author  
Pakrat Estukyan | Pakrat Estukian

Ermenice | Armenian

Öykü | Short stories

Şubat 2013, İstanbul | February 2013, Istanbul

Baskı

Sena Ofset

2. Matbaacılar Sitesi 4NB7-9-11 Topkapı-İstanbul

Tel: (0212) 613 03 21

Sertifika No: 12064